



**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՄԻՈՒԹՅՈՒՆ**



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևան

02 օգոստոս 2014թ.

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը և Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ)՝ կարևորելով Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հեռանկարները, այդ գործակցությունում հայ երիտասարդության դերի և մասնակցության բարձրացումն ու ընդլայնումը, մարզամշակութային, կրթադաստիարակչական, ռազմահայրենասիրական ծրագրերի իրականացումը, կնքեցին գործակցության հուշագիր հետևյալի մասին.

1. Մշակել և համատեղ իրականացնել մարզամշակութային, կրթադաստիարակչական, ռազմահայրենասիրական և այլ ծրագրեր ու ձեռնարկներ՝ Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և Սփյուռքում:
2. Հայաստանում և Սփյուռքում աջակցել սկաուտական բանակումների կազմակերպչական աշխատանքներին, երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպմանը:
3. Աջակցել համահայկական մարզական խաղերի մասնակիցների թվի և մարզաձևերի ավելացմանը և իրականացման աշխատանքներին:
4. Կազմակերպել տարածաշրջանային սպարտակիադաներ, մրցումներ, հավաքներ թուրքերի կողմից իրականացված հայերի ցեղասպանության 100-րդ տարելիցի ծրագրերի շրջանակներում:

